



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՊԱՆՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐԳԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1870 ՍՄԻՆ

ՆԻՍ ԵՐԵՒՍԱՍԱՆԵՐՈՐԴ

4 ԳԵԿՏԵՄԲԵՐ 1870



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ՄԻՒՀԷՆՏԻՍԵԱՆ

— 1870 —

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ԲԱՑՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ԺԳ.

27 ՆՈՅԵՄԲԵՐ 1870

ՆԱԽԱԳԱՀ. — Տ. ԵՐԵՄԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍ (Առժամանակեայ կարգեալ)

ԱՏԵՆԱՊԵՏ. — ՌՈՒՍԻՆԵԱՆ ԷՖ. (Առժամանակեայ կարգեալ)

ԿԱՐԳ ԽՆԴՐՈՑ

1. Ընթերցում ատենագրութեան նախընթաց նիստին եւ ընդունելութիւն ջ. ին :
2. Ընտրութիւն ժ. անդամին Գաւառական Յանձնախումբին :
3. Վերաքննութիւն Սահմ. — Գլուխ թաղական մատակարարութեան :
4. Ներքին կանոնադրութիւնք Ընդհ. Ժողովին, կամ Ատենական կանոնք :

Բարձրաշնորհ Սրբազան Պատրիարքը՝ ինչպէս իւր ազգարար նամակովը կը ծանուցանէր, անձնական տկարութեան մը պատճառով չը կրնայով այսօրվան նիստին ներկայ գտվիլ, երեսփոխանաց հրաւիրանաց վրայ Գերաշնորհ Տ. Երեմիա Եպիսկոպոսը փոխանորդաբար նախագահեց ժողովին, եւ ատենը բացվեցաւ ժամ 7ին ի ներկայութեան 50 երեսփոխանաց, որոց թիւը հետզհետէ բազմացաւ։ Եւ քառօրեւէ Ատենապետ եւ Փոխանորդ միանգամայն բացակայ էին, Ատենադպիր Ռուսինեան էֆ. Գիւանին կողմէն առաջարկեց ժողովին առժամանակեայ ատենապետ մը կարգել։

ԱՅՎԱՏԵԱՆ ՄԱՏ. ԷՖ.— Կ'առաջարկեմ որ այս նիստին եւս Ատենապետի պաշտօնը Ռուսինեան էֆ. ին յանձնվի քըւէարկութեամբ։ Իսկ երբ ժողովը իւր օրինաւոր թիւն ունենայ, այն ատեն Գիւանին ներկայ վիճակն ալ նկատօղութեան առնու, եթէ հարկ տեսնէ։

Այս առաջարկութիւնն ընդդիմախօս չունե-

նայով Ռուսինեան էֆ. քըւէի կը դընէ զայն եւ ժողովը ընդհանուր հաւանութեամբ կ'ընդունի։

1. ԸՆԹԵՐԿՑՈՒՄ ԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՆԱԽԸՆԹԱՑ ՆԻՍՏԻՆ ԵՒ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ ՎԵՑԵՐՈՐԴԻՆ

Ատենապետ էֆ. կը յայտնէ ժողովին թէ Գիւանը կարելոր համարած է մէն մի նիստի ատենագրութեան հակիրճ բովանդակութիւնը յաջորդ նիստին ընթեռնուլ. եւ յետոյ տպագիր հաղորդել երեսփոխանաց, որպէս զի յապաղմանց պատճառաւ մոռացում եւ շփոթութիւն չը պատահի։ Հետեւապէս նախընթաց նիստին ատենագրութիւնը կարդալու համար կը տրամադրվի Ատենադպիր էֆ. ին խօսք տալու։

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ.— Ժողովը արդէն որոշած է որ ատենագրութիւնները առանց կարգացվելու տպագրութեամբ երեսփոխանաց հաղորդվին, ինչպէս ուրեմն Գիւանը կրնայ զայն փոփոխել. տարբեր խնդիր է թէ Գիւանը առաջարկութիւն մը եթէ ունէր այս մասին։

կրնար ընել, և սակայն ի՞նչ է ատենադրութեան չը կարգացվէն ծագելը շիտթութիւնը՝ քանի որ ժողովը որոշած է որ իւրաքանչիւր նիստի ատենադրութիւն յաջորդին պատրաստ գրանցի և ամեն երեսփոխան կանխաւ զայն ստանայ : Աւթ օրվան մէջ ատենադրութիւն մը կրնայ խումբագրվիլ և սպվիլ, եւ օրը երկու անգամ հրատարակվող լրագիրները խնչպէս գիտեցին ոմանք, ապացոյց են որ ասի անկարելի է :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Բ. ԷՑ. — Զենք ընդունիր որ ատենադրութիւնները համառօտված գրվին, այլ պէտք է ամենուն խօսքը ամբողջ արձանագրել մանրամասնօրէն : Նթէ Գիւանը անկարօզ է առ այս, դարմանը մտածել պէտք է : Ոչ նուազ անպատուութիւն է նաև որ եօթ կամ ութ շաբաթ է ի վեր նախորդ նիստերը դեռ տպված չ'ըլլան :

ԱՅՎԱՏԵԱՆ ՄԱՍ. ԷՑ. — Խօսք ուղեցի ատենադրութեան ընթերցման դէմ եղած դիտողութիւնները երկրորդելու համար, երկրորդ նիստին մէջ խնչպէս ատենադրութեան սկիզբը կ'երեւի, Ատենապետը ժամանակի խնայութեան նպատակաւ առաջարկած է որ ատենադրութիւնները տպագրութեամբ հազորովին երեսփոխանաց, եւ յաջորդ նիստերու մէջ դիտողութիւններն ըլլան ու վաւերանան : Ետևութեան էֆ. չորրորդ նիստին մէջ միեւնոյն առաջարկութիւնը կրկնած, հետեւապէս ժողովը որոշած է զայն : Զարմացայ՝ երբ այս անգամ հրաւիրագիրներուն մէջ ընթերցում բառը տեսի : Գիւանը պէտք է որ այս տեսակ փոփոխութիւններ ընէ : Եթէ հարկ մը զգացեր է իւր ընելիքը պարզ առաջարկութիւն մըն է միայն : Կ'առաջարկեմ որ այսուհետև իւրաքանչիւր նիստի ատենադրութիւն մինչև յաջորդ նիստի օր տպագրեալ պատրաստ գրանցի երեսփոխանաց ձեռքը : Իսկ նախընթաց նիստի ատենադրութիւնը, խնչպէս նաև ետ մնացած միւս ատենադրութիւններն ալ հետզհետէ տպագրովով յուղարկվին երեսփոխանաց եւ ժողովուրդի զետեղման և քննարկման կարգովին :

Նթէ Բաղ. ժողովը, ժողովոյս Գիւանը եւ Տրեստիսկան Քորնուրը անկարող կ'ըլլան Ընդհանուր ժողովոյ մէկ օրոշումը դորմադրելու : Կ'ստան լրագիրը որ ժողովն ալ դադրի : Միւսը ամառը Գիւանը ինձի խօսք չը տուաւ որ վաւերացնել ատենադրութեան մը վրայ դիտողութիւն ընելի :

Ատենապետ էֆ. կ'ընդմիջէ ատենադրութեան խօսքը աղագրարելով թէ խնչըն կը շեղի :

ԱՅՎԱՏԵԱՆ ՄԱՍ. ԷՑ. — Ըսել կ'ուզէի թէ Գիւանը խնչպէս կրնայ հիմա ժողովոյ որոշումը փոփոխել, մինչդեռ ինք նախանձախնդիր եղաւ այն ամեն :

ՔԻՆՐՔՃԻՊԱՏԵԱՆ Բ. ԷՑ. — Կը կրկնեմ Այվապետ էֆ. ի առաջարկութիւնը, Նախ ատենադրութիւնները առանց համառօտութեան քիչիւր գրվելու են բառ առ բառ, երկրորդ իւրաքանչիւր նիստի ատենադրութիւն յաջորդին տպագրեալ պէտք է հասնի :

ԱՅՎԱՏԵԱՆ ՄԱՍ. ԷՑ. — Ատենադրութեանց մասին եղած որոշման մէջ միայն մէկ կարեւոր կետ մը պակաս մնացեր է, եւ իրօք հարկ է որ ժողովը զայն նկատողութեան առնու : Ստաց է որ ատենադրութիւնները ընդարձակօրէն գրված տպագրեալ երեսփոխանաց կ'ուղարկվին, բայց Գիւանը նախորդ նիստին մէջ եղած որոշումները ժողովոյն յիշել տալու համար, պէտք է ատենադրութեան ոգին պարունակող հակիրճ բովանդակութիւն մը, քաղուած մ'ընէ և ամեն անգամ յաջորդ նիստին կարգայ զայն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — Կարծեմ Այվապետն էֆ. յիշեց՝ վերջապէս թէ հակառակութեան մէջ ընկած է ինք և իման զի աւրիչ անգամ առաջարկած է որ ատենադրութեանց տպագրութեան չ'ըլլա պակասք ամեն նիստի քաղուած մը կարգացվի : Հիմա այս հակառակութեան առջատելու համար կը կրկնէ իւր առաջարկութիւնը : Գիւանին ալ նարտակը ճիշդ սոյն առաջարկութիւնը կը շօշափել, եւ հիմա ժողովին կամաց կը գրվէ իմանալու համար թէ կ'ուզէ այդ քաղուածը լսել : Թէ տպագրութեան ըստպասելի :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Բ. ԷՑ. — Կ'ուզեմք այդ պիտի քաղուած մը մասիկ ընել : Բայց ընդարձակ ալ տպագրեալ ի ձեռին ունենալու պայմանաւ ժողովը ի դուր ժամանակ չը զխոնջելու համար տպագրութիւն օրօշեց, բայց այսպէս չարափներով երկարի չ'ընաւ :

ՉԱԳԱՋԵԱՆ Թ. ԷՑ. — Եթէ քաղուածը կարգացվի, վաւերացնել պիտի համարվի թէ ոչ :

ՈՍՎԱՆ Թ. ԷՑ. — Օրինաւոր կ'երեւին ինձի այն դիտողութիւնները, որք կը պահանջեն ատենադրութիւնները ժամանակին ստանալ ամ-

բողջ և մանրամասն գրված, բայց առ նպատակին հասնելու համար եւ ալ կ'աղաչեմ որ սակաւ ինչ կարճ ու ամփոփ ըլլան խօսքերը : ԱՆՄԱԳԱՆ ԹՐԱՑԱՆ. — Կ'առարկեն թէ ընթերցումը ժողովոյ որոշման կը հակառակի, ուրմին աւելորդ կը գտնեմ այս խնչընց միայ վիճարանել, վստահի երկու ժամ մնաց ատենանին դոցվելուն, եւ այս վիճարանութիւնը չարունակվելով ժողովը ձեռնունայն պիտի ցրվի, մինչդեռ որոշման կարօտ այնքան խնչիրներ կան :

Ատենապետ էֆ. Նախագահ Սրբազանին զիտօղութիւնը իրաւացի կը համարի և կը հարցնէ ժողովին թէ ատենադրութիւնը լսել կ'ուզէ, եթէ ատենական կանոնաց քննութեան ատենին վերապահել այս կետին որոշումը :

ԱՅՎԱՏԵԱՆ ՄԱՍ. ԷՑ. — Խնչպէս բովանդատ, այս խնչիրը բոլորովին ատենական կանոնաց քննութեան միջոցին ալ թողուլ չ'ըլլար : Պէտք է որ ատենադրութեանց ամենքն ալ ասպել հաղորդվին երեսփոխանաց, այնպէս որ ամեն նիստի նախորդին ատենադրութեանց վրայ կարելի ըլլայ դիտողութիւններն ընել եւ վաւերացնել : Բայց Գիւանը ժողովին զիտօղութիւնները հարցնելէ առաջ պէտք է որ մէկ երես թիվի վրայ ամփոփեալ համառօտ քաղուած մը ներկայացնէ, որպէս զի ժողովը յիշէ նախորդ նիստին մէջ իւր ըրած որոշումը :

Ատենապետ էֆ. վիճարանութիւնը բաւական համարելով, նախորդ նիստի ատենադրութեան ընթերցման խնչիրը քրէի կը գնէ եւ ժողովը ընդհանուր հաւանութեամբ կ'որոշէ որ չը կարգացվի և տպագրութեան սպասվի :

ԻՌԷՔՃԵԱՆ Է. ԷՑ. — Գիւանը թերի բացատրութեամբ խնչիրը քրէի դրաւ, ուստի խօսք կ'ուղեմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — Օրինաւորութիւնը չը ներքեր որ խնչիր մը որոշվել է ետքը՝ վերստին դիտողութեան նիժարկի :

ԻՌԷՔՃԵԱՆ Է. ԷՑ. — Ազէկ դիտելով թէ քրէ տուող և չը տուող երեսփոխաններէն շատր ազէկ չ'ըմբռնեցին խնչիրը, Այս շատերուն կարգէն էի և ևս, ուստի խօսք կ'ուղեմ հաստատելու համար թէ Գիւանը բացորոշ կ'երպով քրէի դրած չ'է խնչիրը :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — Գիւանի բացատրութիւնը

խիտ պարզ էր, ժողովին եհարց թէ նախորդ նիստին ատենադրութիւնը կարգացվի՞ այսօր թէ ոչ, եւ ժողովը չը կարգացվին որոշեց :

ԻՌԷՔՃԵԱՆ Է. ԷՑ. — Խնչիրը նախորդ նիստի ատենադրութեան ընթերցման վրայ չ'էր զի երեսփոխանները անոր ընթերցումը լսելու վատաք չը յայտնեցին, այլ բոլին թէ ատենադրութիւնը տպագրվի, այնպէս որ իւրաքանչիւր երեսփոխան յաջորդ նիստին առաջ զայն իւր ձեռքն ունենայ, այս խնչիրին մէջ քրէի ձգելու բան չը կար : Ֆետոյ քայ ի ընդարձակ ատենադրութեանն անոր մէկ համառօտ քաղուածը ներկայացնելու առաջարկութիւնը երեսան եկաւ, որու համասլտ եմ եւ ևս այս ըլլալ պէտք էր քրէի ձգվելու խնչիրը : Յողովը բացատրութիւն միայն ուղեց Գիւանին թէ կարող է արդևօք իւրաքանչիւր նիստի ատենադրութիւնը տպեալ հասցնել յաջորդին, Գիւանը պարտաւոր է այս մասին բացատրութիւն տալ թէ կարող է կամ ոչ, եւ ի՞նչ է, ի՞նչ է պատճառը :

ԽՕԶԱՍՍՐԵԱՆ Թ. ԷՑ. — Խօսքս Գիւանին այն ընթացքին դէմ է, որով ոչ ի՞նչ ժողովոյ քրէի յարգը կը պահէ, եւ ոչ ուրիշներուն պահել կուտայ զայն : Կ'որ խնչիրը քրէի դրաւ, եւ մենք ձեռնամարմ պատասխանեցինք իրեն, բայց հիմայ ելեր կ'ըսեն թէ ժողովը խնչիրը չը զիտեալ քրէ տուաւ, եւ մեր մօրո քին կը խնդան : Նթէ Գիւանը այսպէս պիտի վարվի միշտ, եւ զեզձու մենքու՝ որք ժողովոյ արժանապատուութիւնը կը նուաստեն, թող տայ, կը բողոքեմ իրեն դէմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — Իրաւուք ունի Խօճասարեան էֆ., ժողովը քաջ ըմբռնած է թէ ի՞նչ խնչրոյ համար տուած է իր քրէն, եւ աւելորդ էր ասոր վրայ խօսիլ և մինչև անգամ խօսք տալ : ժողովոյ վրայ խնչացող չը կայ, այլ միայն իրէքնեան էֆ. Գիւանին բացատրութեան եղանակը թերի գտեր և կարծեր է թէ ուրիշներն ալ իրեն պէս կը մտածեն և զժգոն են : ուստի զանի հանդարտեցնելու համար միայն բացատրութիւն տուաւ Գիւանը, իւր դիտողութիւնը լսել չ'արը :

Ատենապետ էֆ. այս բացատրութիւնը տալէ ետքը հրաւիրեց ժողովը որ Զ. նիստին վրայ իւր դիտողութիւնն ընէ :

ԽՕԶԱՍՍՐԵԱՆ Թ. ԷՑ. — Այդ Ատենադրութեան վրայ դիտողութիւն ընելու անկարող եմ :

չէ թէ անոր համար որ գիտողութիւնն չ'ունիմ, այլ վասն զի ատենագրութիւնը ձեռքս անցած չ'է :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Որովհետեւ ժողովը դեռ իւր օրինակը թիւը չ'ունի, ատենագրութիւնը չը կրնար վաւերանալ, այլ միայն . . .

Ատենապետ էֆ. Փափազեան էֆ. Ի խօսքըն ընդմիջելով, ազգարարեց թէ Դիւանին օրինակորութեան դաս տալու պէտք չը կայ եւ թէ ինք իւր գիտողութիւնը միայն կրնայ ընել ատենագրութեան վրայ, եթէ ունի :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — 2. Նիստի ատենագրութեան 83-րդ երեսին մէջ գրվածին համեմատ, երբ Վերաքննիչ 3անձնախումբին տեղեկագրին վերջաբան առաջարկութիւնը փոխատենապետ Աղաբէկեան էֆ. կարգաց ու քուէի դրաւ, եւ ժողովը ընդունելէն ետքը՝ Սրբազան Պատրիարքն առաջարկեց որ վերաքննելի յօդուածները երբ մէկ կողմէ ընդունվին Ընդհ. Ժողովէն, միւս կողմէ անմիջապէս գործադրութեան չըջանին մէջ դրվին : Աղաբէկեան էֆ. իրր երեսփոխան պատասխանելով Սրբազան Նախագահին յայտնեց թէ « քանի որ հին Սահմանագրութիւնը կայսերական հրամանաւ գործադրութեան չըջանին մէջ է, եւ նորը աւելուին ընդունված եւ վաւերացված չ'է, թէեւ կրնանք ընդունիլ նոր յօդուածները, բայց չ'ենք կրնար գործադրել մինչեւ որ Բ. Դուռը չը վաւերացնէ » :

Այս խօսքը Ատենապետ էֆ. էն լսած ատենս զարմանքս չի կրցայ բռնել թէ ինչպէս ուրեմն ինքը տեղեկագրին վերջաբան առաջարկութիւնը, որոնց առաջնոյն երկրորդ մասը կը պարունակէր Սրբազան Պատրիարքին առաջարկութիւնը, անուշագրութեամբ քուէի դրաւ եւ անմիջապէս ինք նախ քան զամենայն յետս կօչեց, կարծելով թէ Սրբազան Պատրիարքը նոր առաջարկութիւն մը կ'ընէ, մինչդեռ տեղեկագրին վերջաբան առաջարկութեանց առաջնոյն երկրորդ մասն էր, զոր ժողովը իր հաւանութեամբն ընդունած էր : Այն միջոցին խօսք ինդրեցի, սակայն մինչեւ կարգն ինծի « գալը » ուրիշ երեսփոխաններ հասկցուցին թէ ինչ անտեղութիւններ կրնան ծնանիլ անվաւեր սահմանագրութիւն մը գործադրելէ : ուստի երեսփոխանք զրեթէ միաբան հաստատեցին թէ այժմ յօդուածները քննութեան առնվին եւ ընդունվին, գործադրութիւնը ետքի գործ է, ընդուն-

վելէն վերջը կը խօսինք ատոր վրայ . որով ետ թողած եղան գործադրութեան մասին որոշումը : Խօսքին կարգն ինծի գալով ըսի . « ես գործադրութեան մասին ըսելիքներ ունէի, բայց որովհետեւ այժմ ետ թողվեցաւ, եւ յօդուածները ընդունվելէն վերջը այդ մասին խօսիլ որոշվեցաւ, ուստի իմ ըսելիքս ալ ետքի կը թողում » :

Ատենագրութեան մէջ այս մասը եւ իմ խօսքնս բողոքովին անյայտ մնացած ըլլալուն համար, սոյն գիտողութիւնն ընել արժան դատեցի :

Իմ ըսածներուս ապացոյց են՝ Ոգսէն էֆ. ի (երես 86) ըսելը թէ՛ « մեզի Սահմանագրութեան վերաքննութիւնը յանձնված է, ուստի գործադրութեան մասին խօսք բնաւ տեղի չ'ունի » . նոյնպէս եւ Քշիստոստուր էֆ. ին ըսելը թէ (նոյն երես) « ես չեմ կրնար ըմբռնել թէ Տէրութիւնը չը վաւերացուցած ինչպէս կրնանք գործադրել » . եւ առաջարկելը թէ՛ նախ արդի Սահմանագրութիւնը գաւառներու մէջ գործադրվի :

Կերեւի թէ դիւանագրութեան միջոցին լաւ չ'են ըմբռներ եղած խօսքերը, որով այս մեծ թերութիւնը մնացեր է վեցերորդ նիստի ատենագրութեան մէջ :

Ատենագրութեան վրայ այս գիտողութիւններն ընելէ ետքը՝ անոր ետին կցված շքաբառից ցուցակին վրայ ալ գիտողութիւնն աւնիմ, որովհետեւ ատենագրութեան վաւերացումէն ետքը՝ պիտի հետեւցնեն թէ այն ալ ժողովոյ կողմէն ընդունված է :

ՂԱՋԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ես ալ խօսք կ'ուզեմ շքանուններուն ցուցակին վրայ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Դիտել կուտամ որ ատենագրութեանց տետրերուն վրայ « պաշտօնական հրատարակութիւնք ազգային Պատրիարքարանի » ըսված է, այն նպատակով կարծեմ՝ որոնց մէջ Պատրիարքարանը կրնայ իւր պաշտօնական այլ եւ այլ գրութիւնները դնել, հետեւապէս Ընդհանուր ժողովոյ չը վերաբերիր իւր ատենագրութեան առթիւ վարչական այդ տետրին մէջ գտնված միւս գրուածոց վրայ ալ գիտողութիւնն ընել : Ատենապետի եւ Ատենագրի ստորագրութիւնքը կը գոցեն Ընդհ. ժողովոյ գործօղութիւնները . անոնցմէ անդին ինչ որ տեսիլ Ընդհ. ժողովին չը կրնար վերաբերիլ, Միայն ատենագրութեանց վրայ խօսք կրնամ տալ :

ՈՍԿԱՆ Յ. ԷՖ. — Ատենագրութեան մէջ իմ փոքրիկ մէկ հատուածս կայ, որոյ մէջ « մենք մեր սկզբան հետ հաշտ չ'ենք » ըսած եմ Այս խօսքը,

ինչպէս գրված է հոն, ըսած եմ թէեւ, սակայն թիւր մեկնութեանց տեղի չը թողու համար բացատրութիւն մը կ'ուզեմ կցել անոր, եթէ ժողովը տաս վայրկեան միջոց չ'որոշէ ինծի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Դիւանը չը կրնար արդէն գրուցված խօսքերն ընդլայնելու թողտուութիւն ընել, քանի որ խօսից արձանագրութեան մասին ուղղելու կարօտ ընմը չ'է դիտածնիդ :

ԱՅԼԱՏԵԱՆ ՄԱՍ. ԷՖ. — Եւսուֆեան էֆ. ի խօսքին մէջ 45 օրէն Բագ. ժողովոյ համարատուութեան տեղեկագիրը պիտի ներկայանայ ըսված է, այս խօստումը սեպտեմբեր 25 ի նիստին մէջ եղած է, եւ այսօր դեկտեմբերի 15 է, բայց դեռ տեղեկագիր մ'եկած չ'է, ուրեմն եթէ այս խօսքը աւելորդ է, ջնջվի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Արիշի խօսքին վրայ այս տետակ գիտողութիւններ ընելու, եւ անոր ջնջումը պահանջելու իրաւունք չ'ունիր : Կը գիտեմ որ երեսփոխանք ոմանք թիւր քովորոնած կը թըլին ատենագրութեան մը ընթերցման կամ որ եւ է կերպիւ ներկայացման նպատակը . եղած գիտողութիւնները կը ցուցնեն թէ խօսից եւ իմատոից քննադատութիւնն է նպատակին, մինչդեռ եղելութեան ճշդութեանը վրայ պէտք է ըլլայ պարզապէս գիտողութիւնը, այսինքն արձանագրութեան վրայ : Եթէ մէկ նիստին մէջ խօսվածները միւսին մէջ քննադատելու եղնինք, յաւիտեան ասով պէտք կ'ըլլայ զբաղիլ, ե՛րբ պիտի գտնենք ժամանակ գործ տեսնելու :

ՆԱԽԱԳԱՆ ՍՐԲԱՋԱՆ — Խօծասարեան էֆ. ըսաւ թէ ատենագրութիւնն իւր ձեռքը հասած չ'է դեռ : Կը գիտեմ որ ատենագրութիւնները ստակով կը տրվին ուղղվին, եւ անպատենութիւն մըն է ասի, մինչդեռ կարելի է կանխաւ ասնունն ալ ցրել եւ ի վերջոյ անոր գինը խնդրել :

ԱՏԵՆԱԳՊԻ ԷՖ. — Եթէ Նախագահ Սրբազանը կը կարծէ թէ՛ ատենագրութեան տետրերուն գինը չը վճարող երեսփոխանին ատենագրութիւն չը տրվիր, կամ ատենագրութեան տետրերը երեսփոխանաց չ'են զրկվիր, պարտաւոր եմ յայտնելու թէ իրողութիւնն այս կարծիքէն տարբեր է :

2. Նիստի ատենագրութեանէն զատ ասջի հինգ նիստերունը զրկված են երեսփոխանաց, առանց ժամանակ անցնելու : Երեսփոխանք անժխակի իրաւունք ունին իրենց պաշտօնին բնութեամբ ամեն նիստի ատենագրութեան մէկ տպագիր

օրինակը ժամանակին ի ձեռին ունենալու :

Իրաւ է որ ատենագրութեանց տետրերուն գինը՝ վճարել ուղղ երեսփոխաններէն առնված է եւ կ'առնվի, բայց այն պատճառաւ՝ որ երեսփոխաններէն շատեր կամովին եւ ինքնօրէն ստաջարկած են զայն . եւ ով իրաւունք ունէր մերժելու կեզր : մատակին ի նպաստ այսպիսի առաջարկութիւն մը . մանաւանդ թէ՛ որ երեսփոխան պիտի դժկամակեր ատենագրութեանց տետրերուն ջնջին գինը վճարելու : Կարծեմ այս բացատրութեամբ կ'անհետի այլ եւս երեսակայեալ անպատենութիւնը :

Իսկ Ոգսէն էֆ. իրաւունք ունի 2. նիստին ատենագրութիւնը հասած չ'է իր ձեռքը, եւ ամեն այն երեսփոխանաց՝ որք նախընթաց նիստին ներկայ չ'էին, Այն օրը 2. նիստին ատենագրութիւնը տպարանէն եկած ըլլալով՝ ներկայ երեսփոխանաց ցրելէ ետքը, չ'էր կարծած թէ չ'էին տպագրութիւնը ամբողջ շարաթ մ'ուշանայ, ուստի եւ հրահանգ առած է ի օր 2. ին հետ միասին զրկվի բացակայից : Ստուգեցի հիմա որ այդ հրահանգը անդորձադրելի մնացեր էր, է ին դեռ եւս տպարանէն չեկած ըլլալուն համար : Ուստի պէտք է յաջորդ նիստին թողուլ 2. նիստի ատենագրութեան ընդունելութիւնը :

ՕՏԵԱՆ Ն. ԷՖ. — Ատենագրութիւնը իմ ձեռքս ալ հասած չ'է որ կարենամ անոր վրայ կարծիք յայտնել, ուստի աղէկ կ'ըլլայ որ անոր ընդունելութիւնը յաջորդ նիստին մնայ :

ԽՅԱՍՏԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Երեսփա Սրբազանը մեր խօսքէն ստակի խնդիր մը հետեւցուց, մինչդեռ իմ երեսակայութեանէս անգամ անցած չ'է վասն զի ատենագրութիւնը գրամական պատճառի մը համար չ'է որ իմ ձեռքս չ'է գտնվիր այսօր : Արդ՝ կ'առաջարկեմ որ յաջորդ նիստին մնայ այդ ատենագրութեան գիտողութիւնն ու վաւերացումը, վասն զի ինծի պէս շատերն ալ դեռ ստացած չ'են զայն, ինչպէս վկայեց Ատենագրի էֆէնտին : տարակոյս չը կայ թէ այսպիսի վիճակի մէջ երբ ատենագրութիւնը վաւերացման ենթարկվի, մարդարէաբար սուսած պիտի ըլլանք քուէնիս :

ԻԲԷՔՃԵԱՆ Ը. ԷՖ. — Կ'առաջարկեմ որ այսուհետեւ ատենագրութեանց տետրերուն մէջ ուրիշ բաներ չը յարվին առանց Ընդհ. ժողովոյ հաւանութեան :

ՂԱՋԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Իրէքճեան էֆ. ի առաջարկութեան համաժխտ եմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այդ գիտողութիւնը առաջին օրէն պէտք էր ըլլալ, երբ ատենագրութեանց ճակատը տեսիք

արտի մոտք ծախահարելով գամ խնդրել ջեր Բարձր Արքայնութենէն, զի արդէն ինձ բաժին ընկած այնքան անդամի պարտազանցութեանսրե՛ր՝ զոր Ազգիս անդամ չը գոյացած պաշտօնիս գերի ծնած ըլլալուս համար ակամայ կրելու դատապարտեալ եմ, գոնէ թըւով մը երկուք ալ ծանրացնելուս մի սպասելով, քան զիս օգտաբեր եւ քան զիս յարմար մ'ընտրելու փութասջիք ձեռնարկել առ ի կատարումն անցապաղ ստանապարտեալ օրինաց եւ ի լուծումն վաղվազակի աղգային կարեւոր եւ կենսատու խնդրոց:

Ես որպէս այսօր նոյնպէս եւ յաւիտեան կամ եւ ցանկամ մնալովս անձնանուէր ըստ իմ կարի եւ ձեռնհասութեան ի ծառայութիւն սիրելի Ազգիս, որոյ ընդհանրութեան եւ մասնաւորապէս Զերումը Բարձր Արքայնութեան կմ ամենախոնարհ ծառայ 4 Դեկտ. 1870 ՅԱՄՈՐ ՊԱՍԵԱՆ

ՌՈՒՍՒՆԵԱՆ ԷՑ. (ընթերցեալ նամակը Ատե նագպիր էֆ. ին ձեռքէն ինք առնելով.) մէկը թող գայ նստի Ատենապետութեան տեղք, եւ պիտի խօսիմ:

Յօսք կ'առնում էֆէնտիններ, զի ինձ անկարելի է թողուլ՝ որ այդ հրաժարական իմաստով նամակը զոր լսեցիք, այդ ստորագրութեամբ հարեւանցի մը գայ անցնի այս ժողովին մէջէն, հարեւանցի մը շօշափելով Ազգային Երեսփոխանաց անտարբեր ակնարկը: Այս առթիւ յիս յարուցեալ յիշատակը քաղցր է յոյժ միանգամայն բուն խիստ զոր վախճամ չի պիտի կարենամ բացայայտել, այլ եւ սփ իսկ կրնամ զսպել. փորձեմ:

Այդ հրաժարականը ժողովէն դեռ չընդունված՝ ես իբրեւ երեսփոխան ըստ իմ մասին եւ յանուն Ազգին սրտաբուխ հարկ մը ցանկամ վճարել այն նուիրական յիշատակին որ սիրելի է եւ որ պիտի մնայ յաւերժ սիրելի աժնն աղգային անհատի:

Պալեան եւ հրաժարական. — Այս երկու բաները հակիմաստ են ըստ իս եւ զիրար կը վանեն իմ մտքիս մէջ. կամ չէ՛ նէ՛ բացատրել պէտք է: Այս ազնիւ գերզաստանը՝ ճակատագիր ունի գոզցես երկնային՝ յորդոց յորդի աղգային բարերար գերզատանաց մէկն ըլլալու, որում երախտապարտ ենք մենք ազգովին: Հոս իմ նպատակս այն գիտցված երախտիքները թըւել չ'էքնաւ, պատմութեան է այդ պաշտօնը, այլ անձանօթ թագուն երախտիք մը կայ՝ զանի կ'ուզեմ հոշակել աստ աղ-

մեծապատեցիք, արտի մոտք ծախահարելով գամ խնդրել ջեր Բարձր Արքայնութենէն, զի արդէն ինձ բաժին ընկած այնքան անդամի պարտազանցութեանսրե՛ր՝ զոր Ազգիս անդամ չը գոյացած պաշտօնիս գերի ծնած ըլլալուս համար ակամայ կրելու դատապարտեալ եմ, գոնէ թըւով մը երկուք ալ ծանրացնելուս մի սպասելով, քան զիս օգտաբեր եւ քան զիս յարմար մ'ընտրելու փութասջիք ձեռնարկել առ ի կատարումն անցապաղ ստանապարտեալ օրինաց եւ ի լուծումն վաղվազակի աղգային կարեւոր եւ կենսատու խնդրոց:

Ես որպէս այսօր նոյնպէս եւ յաւիտեան կամ եւ ցանկամ մնալովս անձնանուէր ըստ իմ կարի եւ ձեռնհասութեան ի ծառայութիւն սիրելի Ազգիս, որոյ ընդհանրութեան եւ մասնաւորապէս Զերումը Բարձր Արքայնութեան կմ ամենախոնարհ ծառայ 4 Դեկտ. 1870 ՅԱՄՈՐ ՊԱՍԵԱՆ

ՌՈՒՍՒՆԵԱՆ ԷՑ. (ընթերցեալ նամակը Ատե նագպիր էֆ. ին ձեռքէն ինք առնելով.) մէկը թող գայ նստի Ատենապետութեան տեղք, եւ պիտի խօսիմ:

Յօսք կ'առնում էֆէնտիններ, զի ինձ անկարելի է թողուլ՝ որ այդ հրաժարական իմաստով նամակը զոր լսեցիք, այդ ստորագրութեամբ հարեւանցի մը գայ անցնի այս ժողովին մէջէն, հարեւանցի մը շօշափելով Ազգային Երեսփոխանաց անտարբեր ակնարկը: Այս առթիւ յիս յարուցեալ յիշատակը քաղցր է յոյժ միանգամայն բուն խիստ զոր վախճամ չի պիտի կարենամ բացայայտել, այլ եւ սփ իսկ կրնամ զսպել. փորձեմ:

Այդ հրաժարականը ժողովէն դեռ չընդունված՝ ես իբրեւ երեսփոխան ըստ իմ մասին եւ յանուն Ազգին սրտաբուխ հարկ մը ցանկամ վճարել այն նուիրական յիշատակին որ սիրելի է եւ որ պիտի մնայ յաւերժ սիրելի աժնն աղգային անհատի:

Պալեան եւ հրաժարական. — Այս երկու բաները հակիմաստ են ըստ իս եւ զիրար կը վանեն իմ մտքիս մէջ. կամ չէ՛ նէ՛ բացատրել պէտք է: Այս ազնիւ գերզաստանը՝ ճակատագիր ունի գոզցես երկնային՝ յորդոց յորդի աղգային բարերար գերզատանաց մէկն ըլլալու, որում երախտապարտ ենք մենք ազգովին: Հոս իմ նպատակս այն գիտցված երախտիքները թըւել չ'էքնաւ, պատմութեան է այդ պաշտօնը, այլ անձանօթ թագուն երախտիք մը կայ՝ զանի կ'ուզեմ հոշակել աստ աղ-

ուր իրարու հանդիպեցանք (Բարիդ 1844—45) . րայց բառ էին յայնժամ հարեւանցի՝ յօղս ջընդեալ սպարդիւն: Իսկ երբ գաի դարձեալ զինքը իր ընտանեաց ծոցը (1850) առանձնացեալ յիւրում խըցին, պարապեալ յուսումն իմաստասիրական եւ ընկերական վերացեալ խնդրոց, այլակերպեալ էր գլխովին յափշտակեալ ի սէր Ազգին եւ ընդհանրութեան. բեղմնաւորեալ էին արդէն իւր նախործայ զգացումները: Այս համեստ ազգասէրը իւր առանձնութեան ժամերուն մէջ՝ այն իւր պարկեշտ խուցին նըրիրական ստուերին տակ՝ յղացալուելայն զայն բազմարդիւն խորհուրդը. եւ իբրեւ ճարտարապետ աղգային՝ իւր ձեռքը գծագրեց աղգային կանոնադրութեան հիմնական սկզբանց այն հոյակապ յատակադիւրը, որ թէպէտ ետքերը խմբագրաց գրչին տակ ձեւերու վաղելուչ փոփոխութիւն կրած է, բայց ըստ հիման միշտ նոյն, միշտ ճշմարիտ ու չզիւզելիկ եւ այսօր մեր օրինաց անյեղչի անփճելի կեան է եւ սահմանադրական շէնքին այն լուսեղէն սիւնը զոր աղգովին ընդգրկած ենք սիրով:

Ես կը վկայեմ իմ հողույս խօրէն, ես կը հոշակեմ սա բեմին վերին՝ թէ այն բարերար հանձարն եղաւ ինամածու միանգամայն եւ առաջին շարժանքին այն գեղեցիկ դործին, իւր ջանից եւ ճգնութեանց արդիւնքն է անոր գոյութիւնը. իւր խրախուսանօքն ու հովանւոյն տակ աշխատեցան իւր համախոհ մտերիմքը, որքան ինամք, որքան տքնութիւնք նըրիւրեց սիրով, քանի քանի՝ գժուարութիւնք յաղթեցան իւր ազգեցութեան եւ յանձնաձանաց տակ, Արդ ամեն կերպիւ կրնամ վկայել թէ Ազգը երախտապարտ է այս անուան, եւ ասոր կը պարտի իր Սահմանադրութեան գոյութիւնը: Ինքն իր գրագմանց ձեռքը գերի՝ չէր կրնար մեր աղգային ժողովներուն ներկայ գրտնըվի մարմնապէս, իսկ աւելի եւս իւր սկզբբանցը գերի՝ հողով միշտ ներկայ էր հոն « Ինչ հարկ կ'ըսէր իմ ներկայութեան, կըրոր իմ պաշտած սկզբանցս ջերմ ախոյեաններ իս կը փոխանակեն բարեմասնապէս » եւ իւր խաղաղիկ խուցին խօրէն ինդոզին Սահմանադրական փաստին յատաճղխութեամբ կը ծափահարէր. նոյնը կը կրկնէ ստանապատուլը սցծօր ձեղի իւր եղբայրը: Ինչպէս փաստարանն էր լուսաստիւն, ուստի անպայման ցոյցանային աղգային սիրոյ ճառագայթի ներքուսանց ու պարտեաց փոփոխութեան շատախոնարհ իւր բոլոր բարեկամաց սրտից եւ մտաց վայս Ոչիք եզակաց-

ուր իրարու հանդիպեցանք (Բարիդ 1844—45) . րայց բառ էին յայնժամ հարեւանցի՝ յօղս ջընդեալ սպարդիւն: Իսկ երբ գաի դարձեալ զինքը իր ընտանեաց ծոցը (1850) առանձնացեալ յիւրում խըցին, պարապեալ յուսումն իմաստասիրական եւ ընկերական վերացեալ խնդրոց, այլակերպեալ էր գլխովին յափշտակեալ ի սէր Ազգին եւ ընդհանրութեան. բեղմնաւորեալ էին արդէն իւր նախործայ զգացումները: Այս համեստ ազգասէրը իւր առանձնութեան ժամերուն մէջ՝ այն իւր պարկեշտ խուցին նըրիրական ստուերին տակ՝ յղացալուելայն զայն բազմարդիւն խորհուրդը. եւ իբրեւ ճարտարապետ աղգային՝ իւր ձեռքը գծագրեց աղգային կանոնադրութեան հիմնական սկզբանց այն հոյակապ յատակադիւրը, որ թէպէտ ետքերը խմբագրաց գրչին տակ ձեւերու վաղելուչ փոփոխութիւն կրած է, բայց ըստ հիման միշտ նոյն, միշտ ճշմարիտ ու չզիւզելիկ եւ այսօր մեր օրինաց անյեղչի անփճելի կեան է եւ սահմանադրական շէնքին այն լուսեղէն սիւնը զոր աղգովին ընդգրկած ենք սիրով:

Ես կը վկայեմ իմ հողույս խօրէն, ես կը հոշակեմ սա բեմին վերին՝ թէ այն բարերար հանձարն եղաւ ինամածու միանգամայն եւ առաջին շարժանքին այն գեղեցիկ դործին, իւր ջանից եւ ճգնութեանց արդիւնքն է անոր գոյութիւնը. իւր խրախուսանօքն ու հովանւոյն տակ աշխատեցան իւր համախոհ մտերիմքը, որքան ինամք, որքան տքնութիւնք նըրիւրեց սիրով, քանի քանի՝ գժուարութիւնք յաղթեցան իւր ազգեցութեան եւ յանձնաձանաց տակ, Արդ ամեն կերպիւ կրնամ վկայել թէ Ազգը երախտապարտ է այս անուան, եւ ասոր կը պարտի իր Սահմանադրութեան գոյութիւնը: Ինքն իր գրագմանց ձեռքը գերի՝ չէր կրնար մեր աղգային ժողովներուն ներկայ գրտնըվի մարմնապէս, իսկ աւելի եւս իւր սկզբբանցը գերի՝ հողով միշտ ներկայ էր հոն « Ինչ հարկ կ'ըսէր իմ ներկայութեան, կըրոր իմ պաշտած սկզբանցս ջերմ ախոյեաններ իս կը փոխանակեն բարեմասնապէս » եւ իւր խաղաղիկ խուցին խօրէն ինդոզին Սահմանադրական փաստին յատաճղխութեամբ կը ծափահարէր. նոյնը կը կրկնէ ստանապատուլը սցծօր ձեղի իւր եղբայրը: Ինչպէս փաստարանն էր լուսաստիւն, ուստի անպայման ցոյցանային աղգային սիրոյ ճառագայթի ներքուսանց ու պարտեաց փոփոխութեան շատախոնարհ իւր բոլոր բարեկամաց սրտից եւ մտաց վայս Ոչիք եզակաց-

եալք, սիրտք մեղկացեալք ճոն կը դիմէին ջեանուլ եւ կազդուրիլ ։
 Յետ այնքան երկանց՝ 1850 ի յղացումը ծընունդ առաւ 60 ին . բայց աւանդ . ինք չը հասաւ տեսնելու . իւր բաղձանաց պատկուծը , իւր խնամած փաստին յաղթանակն ալ ծափահարելու ։ Շատեր կրկնեցին , կը կրկնեն եւ ցարդ . « Ա՛ղջ ըլլալու էր » անմահացեալ էր նա արդէն բարեկամք ոմանք ստորին դաւեալին իր չիրմին վրայ
 (Արեւմտեան յայնք ճոնքը) ։

Ձեռ կարող աւելի եւս երկարել եւ կ'ընեմ , տվոր Նիկողոսը , չ'է տեսած եւ զանի մտերմութար ճանչելու երանութիւնը , չ'է ունեցած , չը տրամի թող , կրնայ Յակոբ պէյը տեսնել որ իւր սրտի եւ մտաց ձիրքերովը բնատուր նկարն ու հայելին է իւր եղբոր . ի մի բան՝ եղբայրն յեղբայր կենդանի է , Երիտասարդ Պէյին աղղապրական նախանձը նկարագրել չ'եմ համարձակիր , զուցէ ինչ աւելի տեղեակներ կան այս մասին , ես համոզեալ եմ թէ սա ազիրուպէս կը քայլէ ճիշդ իւր հարազատին ընթացած առաքինական շաւղաց վրայ . ես անոր համեմատութիւնը յարգելով չ'եմ ուզեր իմ գիտցած անոր առանձին գործքերը պատմել աստուծոյ , այս չ'է նպատակս . այլ բացատրել է՝ թէ աղղային գործոց մէջ այս անունը հրաժարական բառին հետ չը կրնար համաձայնիլ բարոյապէս , եթէ տուած մեկնութիւնս չ'ընդունվի ։ Անցելոյն յիշատակաւ հարատեւ ուղեցիլ թէ այսօր հրաժարեալ եմ ըսողը սրտով ներկայ է մեր մէջ . իր զղացմունքը թըւարանութեան տակ ձղելէ խորշելով միանգամայն որ եւ իցէ կերպիւ օրէնքը յարգելով ճշմարտ ազգասիրութեան զգացումն ներշնչեալ զժայռած է զայն տուղերն որ կարդացվեցան . ինչպէս որ լսեցիք « ես միշտ անձնուէր եմ կ'ընէ » ի ծառայութիւն սիրելի Ազգիս ըստ իմում կարի եւ ձեռնհասութեան » ։ Աւստի ես կը խնդրեմ յատկապէս որ ժողովը կարեւորութեամբ ի նկատի առնուի նամակին այս իմաստը եւ զանի նշանակէ իւր արձանագրութեանց մէջ իրրեւ գրաւական աղղասիրական վեճը զգացմանց հեղինակին , զորոյ ազգացոյցը՝ զիտեմ՝ կրնայ միշտ տեսնել Ազգ . Վարչութիւնը երբոր ըստ հարկին դիմել կամենայ անոր ձեռնհաս օժանդակութեանը՝ որ եւ է պարագայի մէջ ։

Կրրեւ անգամ ժողովին՝ խօսքս կ'աւարտեմ առաջարկելով . նախ՝ յանուն Ազգին մեծարանաց քրէ՛ նուիրել Նիկողոսի Պալեան անմահ յիշատակին , յետոյ՝ ընդունիլ Յակոբ պէյին հը-

րաժարականը հանդերձ արձանագրութեամբ իւր նամակին ։
 Արդ իրրեւ Ատենապետ՝ կրնայի այս ետքինը քրէ՛ի գնել , բայց առաջինը՝ որ իմ առաջարկութիւնս է , մի պիտի գնէ քրէ՛ի , մէկը չ'եկաւ չը նստեցաւ ատենապետելու . իմ խօսած ատենս ։ Ես Ազգային ժողովին քողամերկ ներկայացրեցի պատմական ճշմարտութիւն մը որ կ'աւանդեմ աղղային ։

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԱՋԱՆ . — (Առ Ատենարանն ուղղելով խօսքը) Այդ յիշատակը մեր ամենուս սիրելի է ազգովին , այդ բարեկամը զոր զուլայիր , ողբացիր բեմէն , մենք ալ քեզի հետ լացինք , ողբացինք
 Ամենքս ալ այդ երախտագիտական վշտազին զգացումներով համակեալ ենք , համայն Ազգը սիրով կը մեծարէ իւր անձնուէր բարեկամին յիշատակը , եւ կ'ուզէ զանի ազգային պատմութեան անմահ առղերուն մէջ դրօշմել . կարծեմ չը կայ եւ ոչ մէկը որ ասի ժխտէ ։

Ատենաքանը սաստիկ յուզեալ Նիւանն Ատենաղպիր էֆ . ին կը թողու եւ ժողովարանէն դուրս կ'ելնէ ։ Ատենաղպիր էֆ . կարգաւ խօսք կու տայ ուզող ժողովականաց ։

ՓՈՓՈԱՋԵԱՆ Ս . ԷՖ . — Հոգելոյս Պալեան Նիկողոյոսի յիշատակին համար մեծարանաց քրէ՛ կ'առաջարկվի , չէ թէ Ազգին բարերարը , այլ Սահմանադրութեան հիմնադիրը ըլլալուն համար , Մենք շատուց պարտաւոր էինք այդ երախտագիտական հարկը վճարել 1860 մայիս 24ի Սահմանադրութեան հեղինակին , եւ կը կարծէինք թէ Ռուսիոնեան , Օտեան եւ Աղաթօն էֆ . ներն են եղած անոր հեղինակը , եւ հիմա որ Ռուսիոնեան էֆ . իւր յայտնութեամբ այս կարեւոր գաղտնիքը ի վեր կը հանէ , եւ ուր ուրեմն կը ճանչցնէ մեզի թէ Նիկողոյոս Պալեան իւր ազղեցութեամբ եւ ազգասիրական եռանդովը այս ուսումնական անձերը իւր շուրջը հաւաքելով Ազգին գրաւոր օրէնք մը աւանդելու կենսական պիտոյքը զգացեր եւ շարժապիլ եւ քաջալեր կանգնելով ի գոյ ածեր է զայն , նուիրական պարտ մըն է եւ կ'արժէ առաջարկված մեծարանաց քրէ՛ն ընծայել անոր յիշատակին ։

ԵՈՒՍՈՒՅԵԱՆ Ս . ԷՖ . — Խիստ աղէկ բացատրեց Ռուսիոնեան էֆ . այն քրէ՛ին պատճառը զոր ինք կ'առաջարկէ , եւ Երեմիա Արքայանը

ու Փափաղեան էֆ . անոր հարկաւորութիւնը անծխտելի կերպով հաստատեցին , որոնց հետ եւ ես կ'երկրորդեմ ։

Աստի՛ւ պէտք է որ այս յիշատակաց արժանի գործը արձանագրվի ընդհանուր ժողովոյ ատենադրութեան մէջ , որ իւր օգտակար հետեւութիւնն ալ ունի , եթէ ժողովը կշռէ զայն ։ Նշանաւոր գործ մըն է ասկէ քսան տարի առաջ յղանալ Սահմանադրութեան զաղափարը եւ զայն իրադործելու աշխատիլ , մինչդեռ ուրիշներն ալ ունէին այդ զաղափարը բայց կը վարանէին անոր գործադրութեան հնարաւորութեան վրայ ։ Նիկողոյոս Պալեանն եղած է ասոնց մէջ որ յարատեւ աշխատեք է այս մեծ նպատակին հասնելու համար , եւ խորհուրդը երկնելէ ետեւ գտեր է նաեւ այն ուսումնական մարդերը , որք կարող եղեր են իրեն ջանիքը օգնելու ։ Ոմանք կը կարծեն թէ Ազգը Սահմանադրութեան հիմնադիրները մոռցած է , ուստի ընդհանուր ժողովը այս մեծարանաց քրէ՛ն տալով ոչ միայն երախտագիտական պարտք մը կը կատարէ , այլ եւ Ազգը կը բարձրացնէ , զօրաւոր ապացոյց մը տալով թէ ազգին ծառայութիւն մատուցանողներուն յիշատակը անոր առջեւ անմոռաց կը մնայ միշտ ։

ՓՈՓՈԱՋԵԱՆ Ս . ԷՖ . — Խօսքս սխալ կամ թերի չը հասկցվելու համար կը կրկնեմ . Սահմանադրութեան պիտոյքը ժամանակը կը ծնի , եւ Ազգը իր հեղինակութեամբը կը ճանչէ զայն ։ Բայց բնական է որ սակաւաթիւ եւ մասնաւոր մարդեր նախ զայն զգան , եւ անոր դոյտութեան սկզբնապատճառ հանդիսանան ։ Մենք կը կարծէինք որ 1860 ի Սահմանադրութեան Յանձնախումբը եղած է անոր հիմնադիրը , բայց հիմա քանի որ Ռուսիոնեան էֆ . իրեն եւ անդամակցացը վերապահեալ այս հիմնադրութեան փառքը Նիկողոյոս Պալեանի կու տայ , ըսել է որ նա ինքը եղած է Սահմանադրութիւնը սկզբնաւորելու նախաշարժիչ զօրութիւնը ։ Տարակոյս չը կայ թէ այսպիսի մեծ գործի մը յաջողութեան համար Պալեանի պէս բարձր զրից մէջ գտնվող եւ հանձարեղ մէկը պէտք էր , որ Ազգին ուսումնականներուն նեցուկն ու քաջալերն ըլլար , զժուարութիւնները փշրէր եւ ժամանակին այս պիտոյքը յանձնաձէր ։ Ահա այս զօրութիւնն եղած է Պալեան , եւ իրր այն անոր յիշատակը արժանի է յարգանաց ։

Տ . ԱՄԲԵՐՍԻՆՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ . — Ամեն երեսպիտան հարող է այդ երախտագիտական զգաց-

մանց , եւ սրտագին կը փափաքի իւր մեծարանաց քրէ՛ն տալու ։

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ . ԷՖ . — Ատենարանից խօսքերէն հասկցվեցաւ որ Նիկողոյոս Պալեան՝ Սահմանադրութեան հիմնադիր հեղինակներէն մէկն եղած է ։ Ոչ ոք անոր վրայ առանց գովեստից խօսեցաւ , եւ անոր արվիւիք քրէ՛ին այնպիսի իմաստներ նշանակեցին , որքան առաջարկօղբ չ'ըրաւ ։ Բայց ինչպէս արեւին ջերմութիւնը չը կրնար ինզիլը մը ըլլալ եւ քրէ՛ի դրվիլ , նոյնպէս է նաեւ այս խնդիրը ։ Բնաւ ընդդիմախօս մը չը կայ , մէկ կողմէն Պալեանի համար գովեստներ կը խօսվին , եւ միւս կողմէ ամենքը զգածեալ լուծեալ մը կ'ընդունին , այս ամենը երախտագիտութեան եւ մեծարանաց յայտարար նշաններ են , որք յանուն ժողովոյ կ'անցնին արձանագրութեան մէջ եւ Երեսպիտանական ժողովը կատարած կ'ըլլայ իւր պարտաւորութիւնը ։ Աւրիչ պարագայ մը երեւան կ'ելնէ նաեւ որ ամենէն աւելի ուրախութիւն է ինձ ։ Կը կարծվէր թէ Պալեան գերզատանը Սահմանադրութեան եթէ ոչ թէ չնամի , գէթ անտարբեր ընթացք մը ունի անոր նկատմամբ , բայց ահա՛ այս կարծիքը կը ջնջվի , այս ընդհանուր սխալը կ'ուղղվի , եւ Պալեան անունը Սահմանադրութեան հեղինակի պատիւը կ'ըստանայ ։

ՂԱՋԱՐՈՍԵԱՆ Ք . ԷՖ . — Պալեան գերզատանին Ազգին բարերարն ըլլալը շատուց իր վըճիտն ընդունած ճշմարտութիւն մըն է , ես ալ խօճասարեան էֆ . ի պէս կը կարծեմ թէ այս տեսակ մեկին ճշմարտութիւն մը քրէ՛ի գնելը անոր վրայ տարակուսիլ կ'ենթադրէ , եւ կարելի չ'է որ Ազգը այս մասին տարակոյս մը ունենայ կամ այսօրվոնէ միայն ճանչած համարվի անոր բարերարութիւնները ։

ԻԲԵՔԱՅԵԱՆ Զ . ԷՖ . — Ռուսիոնեան էֆ . խորին համոզմամբ խօսեցաւ ու յայտնեց Սահմանադրութեան առաջին հիմնադրին անունը , եւ ուրիշներ փութացին զայն հաստատելու ։ Սակայն Օղաէն էֆ . ըսաւ թէ Պալեան գերզատանը Սահմանադրութեան սկզբան եթէ ոչ թէ չնամի , գէթ համակիր չ'էր կարծվեր , եւ թէ յանկարծ այս կարծեաց հակառակ ճշմարտութիւն մը երեւան կ'ելնէ ։ Իմ Տաճկաստանի մէջ գտնվիլս երկար ժամանակ չ'ըլլալով զարմանք կը պաշարէ զիս թէ Նիկողոյոս Պալեան եթէ իրօք Սահմանադրութեան հիմնադիրն էր , ի՞նչպէս անոր անունը այսքան երկար տարիներ թաղուն կը մնայ . եւ ի՞նչպէս հերք չ'է ։

Սահմանադրութեան նկատմամբ անտարբեր ալ կը կարծվի, կարծիք մը՝ որ զանի հիմնադիր ըլլալէն խիստ հետու կը ձգէ։ Այս իրարու հակադէմ խօսքերը լսելով կ'առաջարկեմ որ իրողութիւնը ստուգվի, եւ այնուհետեւ քրէի դրվի։ որպէս զի եթէ հիմնադիր էր նա, ա՛նոր յիշատակին համար մեր տալիք մեծարանաց քրէն փառաւոր ըլլայ եւ համոզուիմք արատաղրեալ, ու չէ թէ այսպիսի յախուռն կերպով որ մէկ կողմէ զանի հիմնադիր դաւանին եւ միւս կողմէ անտարբեր կը կարծվէր բանն։ Եթէ կասկածները փարատելէ ետքը հարկ ըլլայ մեծարանաց քրէն տալ, երկու ձեռքս մեկանց կը բարձրացնեմ եւ յաւիտեան շնորհապարտ կը դաւանիմ զիս, միայն թէ համոզված ըլլամ։ Բայց առանց ասոր՝ ձեռքերս կը դողան եւ չեմ կրնար քրէն տալ, քանի որ հակառակ կուսակցութիւն մը կը տեսնեմ։

ՌՍԿԱՆ Յ. ԷՅ. — Պալեան նիկողայոսի յիշատակը սիրելի է ամենուն. անոր մահուան կրակիծը ոչ ոք աւելի կ'ըզզայ քան զիս, որ իւր մահուանէն ամիս մը առաջ իւր որդւոց դաստիարակութեան պաշտօնին կոչվեցայ։ Այն սգալի ժամանակը անոր յիշատակին համար իմ փոքր տաղանդս նուիրեցի, հասարակաց ողբը գրի առնելով։ Իւր բոլոր բարիքները եւ գործերը գաղտնի էին։ Ռուսինեան էֆ. սրտակիցըն էր անոր, որ կրցեր է նորա խորհրդոցը մասնակցել, եւ որ քիչ մը առաջ այն մեծ գաղտնիքը յայանեց եւ յուզեալ ու արտասուալից մեկնեցաւ։ Ընդհանուր ժողովը մեծարանաց քրէն տայ կամ ո՛չ, անոր յիշատակը օրհնեալ է միշտ։

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Բ. ԷՅ. — Կերկորդեմ խօսքս։ Ազգին բարեբարաց գործերը քրէի զննել՝ դանձր տարակուսի ներքեւ ձգել է, օրինակի համար՝ կրնանք միթէ Արղան Մամիկոնեանի համար քրէն տալ։

ԳԱՐԱԿԷՕՋԵԱՆ Կ. ԷՅ. — Ոսկան էֆ. Իբէքեան էֆ. ի առարկութեան պատասխանեց, որու խօսքերէն սա հետեւութիւնը կը ծագէր թէ Ռուսինեան էֆ. չ'եղած բան մը իբր իրողութիւն ըսել ուղած է. եւ ժողովը խաբվելու արամադրեալ է, այսպիսի հետեւութիւն մը կարծեմ ժողովն իւր բոլոր ուժովը կը հերքէ։ Պալեանի յիշատակին համար մեծարանաց քրէն տալու պատրաստականութիւնը ամենուն ճակատին վրայ դրօշմեալ կը տեսնեմ ես։

ՆԱԽԱԳԱՆ ԱՐԲԱՋԱՆ. — Իբէքեան էֆ. Տաճկաստանի մէջ չը գանգելուն պատճառաւ թե-

րեւս վարանում կ'զգայ երբ այսօր յանկարծ այս գաղտնիքը կը լսէ։ Ես իմ մտիս շնորհակալութիւն կը յայտնեմ այն ամեն այնիւ եւ զգայուն անձանց, որք այսպէս ազգային բարեբարաց անունը սրտազին կը յարգեն, անջինջ կ'ուզեն պահել, եւ երախտագիտական զգացումներով կը յուզվին անոնց վայ խօսած ասանին։ Ապեւ է որ այսպէս Ազգին համար մրտածօգնեք յիշատակվին, չէ թէ տասը քսան այլ հազարաւոր տարիներ ալ եթէ անցին ա՛նոնց գերեզմանին վրայէն։ Այն հանձարեղ եւ ազգասէր երիտասարդը արքունի շինութեանց ճարտարագետութեանը կը պարտպէր. եւ հասարակ կայսերական յարաբերութեան մէջ էր, հարկաւ այս բարձր ու ծանր գրից մէջ ամեն մարդ չ'էր կրնար գիտնալ անոր գործերը, իբր խցիկին մէջ կը պարտաւորէր նա միայնակ մրտածել եւ գործել յողուս Ազգին առանց հրօշակ տարածելու։

ԵՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՅ. — Յաւալի է որ Պալեանի յիշատակին համար մեծարանաց քրէն առաջարկվելէ ետքը՝ Իբէքեան էֆ. ի կողմէ այսպէս թիւրիմացութեամբ կը մեկնվի Օգոսէն էֆ. ի զգացումները։ Եթէ լաւ կրցայ ըմբռնել, ինչպէս կը կարծեմ, Օգոսէն էֆ. Ռուսինեան էֆ. ի յայտարարութեան վրայ կրկնակի շնորհակալ ըլլալու պատճառներ կը գտնէր. նախ՝ ազգային բարեբարի մը յիշատակին ընծայվիլք մեծարանաց համար կը հրճւեր, եւ երկրորդ՝ անոր համար որ մինչդեռ Պալեան գերգաստանը Սահմանադրութեան վրայ անտարբեր կը կարծվէր, անոր անգամներէն մէկը հիմնադիր եղած էր Սահմանադրութեան, եւ պէտք եղած անձերը գտնելով՝ յառաջ տարեր էր այն մեծ գործը։ (Օգոսէն էֆ. իւր հաւանութեամբ այս բացատրութիւնը կը հաստատէ)։

Տարակոյս չ'ունիմ որ Իբէքեան էֆ. իւր թիւրիմացութիւնը տեսնելով իր պահ մ'առաջ բրած առաջարկութիւնը ետ կ'առնու եւ այս բացատրութեանց առջեւ ոչ եւս կը պնդէ իր կարծեաց վրայ, վասն զի ինք Պօլսոյ մէջ չ'էր ապրեր եւ իրեն համար տարակուսելի կրնային ըլլալ ամենէն ակն յայտնի իրողութիւնները։ Ընդհ. ժողովը իր մեծարանաց զգացումները արձանագրութեան մէջ անցնելով՝ մեծ պարտաւորութիւն մը կատարած պիտի ըլլայ, մահաւանդ այս խորհրդաւոր օրը՝ որ հոգեւոյս ազգասէրին անուան տարեդարձն է։

Այս առթիւ կը յայտնեմ նաեւ որ, Ռուսինեան էֆ. ի այնպիսի տխուր ազդեցութիւն մը

բրած է իւր մտերիմ բարեկամին յիշատակը, որ չը պիտի կարենայ ատենապետութիւնը շարունակել, ուստի խնդրած է որ իր անզը ուրիշ մը կարդէ ժողովը։

ՌՍԿԱՆ Յ. ԷՅ. — Այսօր հոգեւոյս Պալեանի անուան տարեդարձն է, որքան օրհնողներ կան վերջը։ Կ'առաջարկեմ որ ամեն տարի Սահմանադրութեան տարեդարձին օրը՝ ի յիշատակ անոր անմահ հոգւոյն եկեղեցեաց մէջ հանգիստ պէս պատարագ մատուցվի։

ՄԷՐԵՏ-ԳՈՒԼԻ Յ. ԷՅ. — Տխրամած համակրութեամբ լսեցինք ամենքս ալ Ռուսինեան էֆ. ի պահ մ'առաջ բրած յայտարարութեանը. ես կ'ըսեմ թէ Պալեան նիկողայոսի յիշատակին համար անոր ըրած առաջարկութիւնը ժողովը նոյն վարկենէն ընդունած էր. համայն ժողովականաց զէմքին վրայ նշմարված պատրաստակամութիւնն ուրիշ բան չ'էր, այլ եթէ հոգեւոյս ազգասիրին սրտազրու յիշատակին համար սէր մեծարանքը նուիրելու անզրդուելի սրամաղորութիւն, ինչպէս որ յայնմիտէ խօսք առնող ատենաբանք քաջ իսկ ապացուցին զայն։

Երբ Ռուսինեան էֆ. յուզեալ մեկնեցաւ, կրկին վերագրանալու համար էր, իրեն կ'սպասէինք որ իւր յարուցած խնդրոյն ինք վերջ տար իբր Ասենապետ, բայց լուր կուտայ այժմ թէ իւր յուզմունքը զեռ եւս չ'է հանդարտած եւ թէ անկարելի պիտի ըլլայ իրեն իւր պաշտօնը շարունակել այսօր, այսօր ամենայնիւ ես կարծեմ թէ կրնանք այլ եւս վերջ տալ այն նիւթին եւ միւս խնդիրները ձեռք առնուլ։

Տ. ՎԱՊՈՒՏԻԿԵԱՆ Յ. ԵՊՍ. — Երկու խօսք ալ ես կ'ուզեմ ըսել այդ յիշատակին վրայ։

Սահմանադրութեան հաստատութեան ամեն գաղտնիք մըն էր ճարտարագետ նիկողայոս Պալեանի անունը։ Մեծ ուրախութիւն կ'ըզամ սո՞ Ռուսինեան էֆ. այսօր զայն եւեւան հանեց, զոր մենք եւս գիտէինք եւ պատենութեան մը կ'սպասէինք այս յայտնութիւնն ընելու համար։ Անկէ՛ ի վեր աման եւեք տարի կ'անցնի եւ անայսօր ստիժը կը ներկայանայ այս մեծ գործը հռչակելու։ Այ թէ մեր ազգայինք անհատաբար, այլ Ընդհ. ժողովը թուրքիոյ մէջ զրունջով բոլոր հայոց կողմէ պէտք է իր երախտագիտական մեծարանքը հանդիսուդէս մատուցանէ անոր անմահ յիշատակին, ի ներկայութեան Ս. Պատրիարքին, Արղանայ նահատակութիւնը հրապարակաւ կատարվեցաւ. աշխարհի առջեւ, բայց այս բարեբարին գործերը գաղտնի մնացած են եւ պէտք է բոլոր ազգին

եւ պատմութեան աննդել զանոնք։ ԱՏԵՆԱԳՊԵՐ ԷՅ. — Որովհետեւ այս պահուս Ստենագրատ չը կայ Գիւանին մէջ, հարկ կ'ըլլայ ինձ յանուն Գիւանի խօսք առնուլ։

Ռուսինեան էֆ. ցարդ թագուն մնացած գաղտնիք մը հրատարակեց յայտնեց երեսփոխանական ժողովոյ թէ նիկողայոս Պալեան յղացած է զառաջինն ազգային Սահմանադրութեան գաղտնիքը, ուստի եւ անոր յիշատակին համար մեծարանաց քրէն նուիրել առաջարկեց։ Չեղաւ ժողովական մը որ ընդդիմարանէր ասոր, եւ ամեն երեսփոխան որ խօսեցաւ, Ռուսինեան էֆ. ի առաջարկութեան կարեւորութիւնը հաստատեց, այնչափ որ քրէն ժողովուր իսկ հարկ չը մնաց։ Ռուսինեան հոգեւոյս նիկողայոսի գործոց վրայ Ռուսինեան էֆ. ի ըրած յայտարարութիւնը միմայն հաւանութեամբ ընդունված է, եւ ժողովն անոր անմահ յիշատակին համար իւր երախտագիտական մեծարանաց սրտազին զգացուծը յայտարարելէ ետքը՝ կ'ընդունի Պալեան Յակոբ պէյի հրաժարականը, ըստ առաջարկութեան Ռուսինեան էֆ. ի։

Այս եզրակացութեան վրայ ամեն կողմէ հաւանութեան ձայներ հնչեցին, եւ ժողովն որոշեց արձանագրել զայն իւր ատենադրութեան մէջ։ Ապա կէս ժամ հանդիսաւ առաւ։

Հանդիսուդն յետոյ Ատենապետ Ռուսինեան էֆ. կրկին իւր պաշտօնին զուխն անցնելով, յայտնեց ժողովին թէ Գործադիր Յանձնաժողովոյ կողմէն անդեկազիր մ'ընդունած է Գիւանը։ Ատենագրող էֆ. կարգաց զայն, որ կը ծանուցանէր թէ Եղեհիոյ վիճակէն երեսփոխան ընտրված է Պօլսեցի Եղիազար էֆ. Մելիքեան։

Ատենապետ էֆ. գիտել տալով թէ Գործադիր Յանձնաժողովն այս ընտրութիւնը օրինաւոր դատած է, ժողովը վաւերացուց զայն ձեռնաձրարձ քրէնարկութեամբ։

Չ. ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ՏԱՍԵՐՈՐԴ ԱՆԴՍՄԻՆ ԳԱԻԱՌԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԹԻՒՄԻՆ

Տ. ՅՈՎ. ԲԱՋԱՆԱՏ ՄԷՐԵԱՆ. — Գաւառական Յանձնախումբն 10-րդ անգամին ընտրութեան համար կ'առաջարկեմ որ առանց համեմատական ընտրութեան ձեռնարկելու։ Տ. Սիմեոն Եպիսկոպոսը ընտրեալ համարվի. վասն զի ոչ միայն քան զիս յարմար է նա այս պաշ-

տօնին, այլ իմ պաշտօնական գրադումներէս զատես արդէն Յարարերութեանց Յանձնախումբին մէջ ալ պաշտօն ունիմ եւ անբաւական եմ զայս ամենը տանելու :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Դիտել կու տամ որ համեմատական քրէտարկութեան մէջ մտնող երկու անձերէն մէկուն հրաժարելովը միւսը ընտրոված չը համարվիր, այլ հարկ կ'ըլլայ յաջորդ առաւելագոյն քրէտ առնողը դնել անոր տեղ :

ԽՅԱՍՏԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Թէ եւ ես ալ վարչութեան Գաւառական Մասնաժողովին եւ Ընդհ. ժողովոյ Գաւառական Յանձնախումբին միանդամայն անդամ ընտրված եւ իբր աշխարհական աշխարհային գրադումներու մատնված աւելի իրաւունք ունէի հրաժարելու, բայց չ'ուզեցի ինչ պահանջված ծառայութիւնը զլսուիլ իսկ եկեղեցականներուն համար խիստ ծանր է ազգին ծառայութենէն քաշվիլ : Զեմ ըսեր թէ ձեր պարտաւորութիւնը չ'էք կատարել, այլ զայն յիշեցնելու համար կ'ըսեմ թէ՛ եկեղեցոյ մէջ կոչում առած էք եւ փրկունը ձեր վրայ առնելով աշխարհային ամեն գործերէ բաժնված :

ԵՈՒՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՖ. — Օգտէն էՖ. ըսաւ թէ եկեղեցականները կոչում առած են եւ չ'են կրնար հրաժարիլ, իսկ ես աւելի հեռուն երթալով կ'ըսեմ թէ՛ նոյն իսկ աշխարհականներն ալ չ'են կրնար ժխտել Ազգին պահանջած ծառայութիւնը :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Կարի համառօտ կը խօսիմ, բայց շատ անգամ Դիւանը խօսք չը տար ինձի, մինչդեռ ուրիշներն արդէն ընցած խընդրոց վրայ երկարօրէն խօսելու թոյտուութիւն կը վայելեն : Եւ ահա այս է պատճառ, որով կ'ըստիպվիմ ստէպ առանց խօսք առնելու խօսիլ :

Ժողովը Գաւառական Յանձնախումբին մնացորդ մէկ անդամին ընտրութեան ձեռնարկեց, եւ ի ներկայութեան սահմանեալ քննըաց քրէտարկութեան եւ քրէտամարի գործողութիւնները կատարվեցան երկու առաւելագոյն քրէտ ստացող անձանց վրայ . 30 ժողովականք քրէտարկութեան մասնակցած էին, որոցմէ երկուքը պարագ քրէտ տուած ըլլալով՝ բացարձակ առաւելութիւնը կ'ըլլար 15 :

- Քրէտամարի արդիւնքը եղաւ
- Տ. Սիմէօն Եպիսկոպոս քրէտ 15
- Տ. Յովհանէս Քահանայ Մկրտան » 13
- Հետեւապէս Տ. Սիմէօն Եպիսկոպոսը Գաւառ

առական Յանձնախումբին անդամ ընտրեցաւ :
Որոշվեցաւ, նորընտիր Յանձնախումբին ընտրութիւնը պաշտօնապէս ծանուցիլ Սրբազան Պատրիարքին՝ որ զայն ժամ յառաջ հրաժարելի պաշտօնն սկսելու :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Կ'առաջարկեմ որ ժողովին ներքին կանոնաւորութեան համար ատենական կանոնները ամենէն առաջ քննվին եւ որոշվին :

ԱՅՎԱՍԵԱՆ ՄԱՏ. ԷՖ. — Որովհետեւ Սահմանադրութեան մէջ ատենական կանոնաց յատկացեալ գլուխ մը կայ, որոյ յօդուածները խիստ կը նմանին առանձինն պատրաստված ներքին կանոնագրութեան, ինչ հարկ կայ մի եւ նոյն բանին համար երկու անգամ ժամանակ կորուսանել, կ'առաջարկեմ որ Սահմանադրութեան վերաքննութիւնն ըսկալի :

ԱՅՆԱՊԵՏ ԷՖ. — Սահմանադրութեան մէջ գտնված յօդուածները կանոն չ'են, այլ օրէնք, այլ սկզբունք, որք անփոփոխի կը մնան ժամանակ մը որոշվելէն ետքը . իսկ ատենական ներքին կանոնները պարզ որոշումներ են, զորս ամեն ժողով իւր ներքին վիճակին կը յարմարցնէ եւ ըստ պարագայից կը փոփոխէ :

ԱՅՎԱՍԵԱՆ ՄԱՏ. ԷՖ. — Որքան կը փախչիմ խօսածիս վրայ պնդելէ նոյնչափ հարկը զիս կ'ըստիպէ : Սահմանադրութեան նոյն գլխին մէջ ինչ որ գրված է, ատենական կանոնաց ծրագրին մէջն ալ միեւնոյնը կայ : Եթէ Դիւանը անգամ մը բաղդատէ զանոնք, չը պիտի կրնայ մեծ տարբերութիւն մը գտնել, որ թէ Սահմանադրութեան նոյն գլխին եւ թէ ատենական կանոնաց ծրագրին էութիւնը միապէս կարեւոր ընէ. եթէ ասոր հակառակը հաստատվի, խօսքս ետ կ'առնում :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ատենական կանոնները այնպիսի բաներ ըլլալու են, որ Սահմանադրութեան մէջ չը գտնվին :

ԽՅԱՍՏԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Այվատեան էՖ. ի առաջարկած կերպին մէջ գիւրութիւն կայ գործելու : Մի եւ նոյն վիճաքանութիւնները պիտի ծագին թէ հիմնական եւ թէ ատենական երկրորդական կանոնաց քննութեան դրված ատեն . ուստի կը կրկնեմ որ այս երկուքը միանգամայն ուշադրութեան առնվի : Այսպէսով ըսել կ'ըլլայ թէ ինչորոց կարգին մէջէն խնդրոյն մէկը կը սրբվի, որ ոչ պաշտպան ունի եւ ոչ ընդդիմախօս, հետեւապէս ժողովը ուղղակի Սահմանադրութեան վերաքննու-

թեան խնդիրը ձեռք կ'առնու :
ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Կ'երկրորդեմ :
ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Դիւանը խօստացած էր երկրորդ ծրագիր մը պատրաստել, ո՛ւր է :
ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Յուսամ որ ի մօտոյ կտրենայ ներկայացնել :

ԻԲԷՔՃԵԱՆ Է. ԷՖ. — Երկու երեք անգամ խօսք ուղեցի եւ չը տրվեցաւ, խօսք չ'ունեցողները խօսեցան բայց դեռ կարգը մեզի չ'եկաւ : Կը բողոքեմ Դիւանին այս ընթացքին դէմ եւ կը խնդրեմ որ ժողովը ուշադրութեան առնու :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այդ բողոքը ներքին կանոնի մը հարկաւորութիւնը ցուցնել է, եւ չէ թէ ուրիշ բան : Ժողովին մէջ բարձր ձայն ունեցողները խօսք կ'ուզեմ ըսելով ձայնեղին կը լսեցնեն ու խօսք կ'առնուն . բայց բուն կանոնը ատանկ չ'է, պէտք է որ խօսողները գան եւ իրենց անունը Դիւանին արձանագրել տան : Դիւանը երբէք գիտնալով խօսք տալու զանցառութիւն չ'ընէր, ուստի յանցանքը կէս մը ձերն է անլսելի ձայնով խօսք ուղեւորը համար, քիչ մ'ալ ատենական կանոնաց պակասութեան, եւ եթէ կ'ուզէք քիչ մ'ալ մերը՝ որ ձեր ձայնը չը կրցանք լսել :

ԻԲԷՔՃԵԱՆ Է. ԷՖ. — Այդ պատճառներուն եւ ոչ մէկը կ'ընդունիմ, փոքր ի շատէ քաղաքավար ընկերութեանց մէջ անգամ խօսելու կարգ կը պահվի : Կանոնի բացակայութիւնը չը կրնար Դիւանը արդարացնել, ես իւրեն դէմ բողոքեցի ձայնս չը լսելուն համար, թող զինքը երեսփոխանաց ձայնը լսելու վիճակին մէջ դնէ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Երբ Դիւանը չէ լսած ձեր խօսք ուղեւոր, ո՛ւր է ասոր մէջ քաղաքավարութեան պակասութիւնը :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ — Ամեն երեսփոխան ազատ է խօսելու . դատ մը երեսփոխանք կան որ խօսիլ կ'ուզեն ու չ'են խօսիր, եւ ուրիշներուն դէմ կը գանգատին . կան ուրիշներ ալ որ շատ կը խօսին եւ կը գանգատին թէ քիչ խօսած են . վերջապէս կարելի չ'է՞ արդեօք այնպիսի կարգ մ'ունենալ որ ամենքն ալ խօսին :

Ատենապետ էՖ. առանց հիւանդութեան կամ ճամբորդութեան պատճառի երեք անգամ յաջորդաբար բացակայ եղող երեսփոխանաց մասին ժողովոյ ըրած որոշումը յիշելով, հրաւիրեց

զԱտենապետը ԷՖ. Կիւնտին որ միեւնոյն վիճակին մէջ գտնվող երեսփոխանաց յուսուելու ներկայացնէ ժողովին :

Ատենապետ էՖ. ներկայութեան անարէն քաղված հետեւեալ ցուցակը ներկայացուց :

1. Տ. Սուքիաս Քահանայ Մայր Եկեղեցոյ
2. Ալեանաբեան Խաչիկ էՖ.
3. Թորգոմեան Պօղոս »
4. Թորոս Դիտակ պէյ »
5. Ղազարոսեան Սահակ էՖ.
6. Նեվրուզ Արեղիկ »
7. Տօքթէօն Ռաֆայէլեան »
8. Տօքթէօն Սերվիլէն »
9. Սուլուխանեան Նիկողոս »
10. Սէթեան Միհրան »
11. Փափագեան Կարապետ »
12. Տօքթէօն Քեաթիպեան »

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Կ'առաջարկեմ որ այդ բացակայ երեսփոխանները անմիջապէս հրաժարեալ համարվին :

ԱՅՎԱՍԵԱՆ ՄԱՏ. ԷՖ. — Ասկէ առաջ Պալեան Յակոբ պէյ նամակ մը գրած էր, որով կը յայտնէր թէ ուրբաթ օրերը ժողովոյ նիստերուն չ'էր կրնար ներկայ գտնվիլ, թերեւս հիմա ալ այս պատճառին համար հրաժարական տուած է : Կ'առաջարկեմ որ ժողովը երբեմն ուրբաթ եւ երբեմն կիրակի օրերը փոփոխակի նիստ կազմէ . եւ եթէ բացակայ երեսփոխանաց ցանկին մէջ կան այնպիսի անձինք որ ուրբաթ օրվան պատճառով չ'են կրցած ժողովոյ նիստերուն ներկայ գտնվիլ, ծանուցվի ժողովոյն : Շարունակ շարթուն մէկ օրը նիստ կազմելը Ազգին ընկիւք անոնց ծառայութիւնը բռնաբարել է :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այվատեան էՖ. նախ իրաւունք չ'ունի Յակոբ պէյի կամ ուրիշի մը նամակին իր ուզած դիտումը տալու . երկրորդ ժողովը որոշած է որ յաջորդաբար առանց հիւանդութեան կամ ճամբորդութեան պատճառի երեք անգամ բացակայ գտնվող երեսփոխանը հրաժարեալ համարվի, հետեւաբար խնդրէն կը շեղի իւր դիտողութիւններովը :

ԽՅԱՍՏԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Կը ցաւիմ որ ժողովոյ Ատենապետն ու Փոխանորդն իսկ ստէպ բացակայ կը գտնվին :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ինչպէս ներկայութեան տուած կը ցուցնէ Ատենապետ Օտեան էՖ. մինչեւ ցարդ հիւանդութեան պատճառով բացակայ գտնված է, եւ այսօր միայն նամակ գրած չըլլալուն համար բացակայ նշանակված :

Նմանապէս Փոխատենապետ Աղաբէկեան

ԳԻՆ Զ ՂՐՈՒՇ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՏՈՒԿԻՆ

Կը ծախվի ի Գիւանատան Պատրիարքարանի ի Ղալաթիա ,
եւ կը գտվի ամեն գրավաճառաց քով եւ Նիկիզեցեաց բանկայնէրը :